ՍԻՐՏԸ

Մի սիրտ էր մայթին ընկած թփրտում
Ու դողում՝ յանկարծ չընկնի՞ ոտքի տակ.
- Ի՞նչ ես անում դու - ասի - այս ցրտում.
Ինչո՞ւ չես մնում քո բնի մէջ տաք:
Նա պատասխանեց.
- Անմաքուր հոգին ինձ տեղից հանեց ...

ԱՅՍՕՐ

Այսօր որդիս ըմբոստացաւ
Ու հարուածեց սրտիս՝ նետով:
Նետը սրտիս միջով անցաւ,
Ու ես անցայ մահուան մօտով...
(Սակայն հոգիս ուրախացաւ,
Որ ես պիտի գնամ շուտով...)
Փրկիչ Տէրս, թող որ ների
Իմ «նետածիգ» կտրին բալին:
Միայն օրհնանք նրան բերի
Ու թող ոտքը չառնի քարին...

ԿԱՆԳ ԱՌ, ԺԱՄԱՆԱԿ...

Կանգ առ, ժա՛մանակ,
Գուցէ արքնանա՞յ վարորդը թշուառ,
Իր ինքնաշարժի ղեկի մօտ քնած,
Որի մեքենան սուրում է առաջ,
Ջորն ի վար տանող ճանապարհով կարճ...
Կանգ առ, ժա՛մանակ,
Մինչեւ արքնանայ ազգը իմ քնած,
Որի գնացքը սուրում է արագ,
Դէպի դժոխքի դռները կրակ...

ՄԻՇԱ ՍՎԱՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@